600.0053.31.07.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2002 թվականի №53Ա
ք. Երևան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի ա) կետը՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝

1.1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար՝

- երկդրույք սակագնային համակարգում՝
  - առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 2.565 դրամ/կՎտժ, առանց ավելացված արժեքի հարկի,
  - հզորության ամսական վճարը՝ 2206.82 դրամ/կՎտ, առանց ավելացված արժեքի հարկի:

1.2. «Հրազդանի ջերմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար՝

- երկդրույք սակագնային համակարգում՝
  - առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 12.466 դրամ/կՎտժ, առանց ավելացված արժեքի հարկի,
  - հզորության ամսական վճարը՝ 509.65 դրամ/կՎտ, առանց ավելացված արժեքի հարկի:

1.3. «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար՝

- երկդրույք սակագնային համակարգում՝
  - առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 13.224 դրամ/կՎտժ, առանց ավելացված արժեքի հարկի,

- հզորության ամսական վճարը՝ 1450.83 դրամ/կՎտ, առանց ավելացված արժեքի հարկի:

1.4. «Որոտանի ՀԷԿ -երի համալիր» փակ բաժնետիրական ընկերության համար՝

- երկդրույք սակագնային համակարգում՝
  - առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 0.789 դրամ/կՎտժ, առանց ավելացված արժեքի հարկի,
  - հզորության ամսական վճարը՝ 166.52 դրամ/կՎտ, առանց ավելացված արժեքի հարկի:

1.5. «Սևան-Հրազդանյան կասկադ» փակ բաժնետիրական ընկերության համար՝

- երկդրույք սակագնային համակարգում՝
  - առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 0.966 դրամ/կՎտժ, առանց ավելացված արժեքի հարկի,
  - հզորության ամսական վճարը՝ 418.99 դրամ/կՎտ, առանց ավելացված արժեքի հարկի:

1.6. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության համար՝

- երկդրույք սակագնային համակարգում՝
  - էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության վճարը (արտադրող կայաններից առաքված էլեկտրաէներգիայի ամբողջ քանակի համար)՝ 0.064 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի,
  - ծառայության հաստատագրված ամսական վճարը՝ 134.17 մլն դրամ, առանց ավելացված արժեքի հարկի:

1.7. «ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 4.05 դրամ/կՎտժ, առանց ավելացված արժեքի հարկի,

1.8. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը «Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերության կողմից վաճառվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 9.019 դրամ/կՎտժ, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը վաճառվող էլեկտրաէներգիայի սակագնում ներառված են նաև «Հայէներգո» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունների ծառայությունների դիմաց վճարները:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 29-ի N31 որոշումը և Հայաստանի

Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի ապրիլի 16-ի N27 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Վ. ՄՈՎՍԵՍՅԱՆ**

Երևան
31 հուլիսի 2002թ.
ժամը 17^{00}